«Սպորտային սերունդ» ծրագիր

ՀՀ հանրակրթական դպրոցներին սպորտային մարզագույքի տրամադրման մրցույթի կանոններ

«Սպորտային սերունդ» ծրագիրն իրականացվում է Կայուն Զարգացման Հայկական Հիմնադրամի կողմից (Երևան 0037, Ազատության 10/7, +37410201840, www.af4sd.org) «Երեխաների համար ՈՒԵՖԱ հիմնադրամի» համաֆինանսավորմամբ:

Ովքե՞ր կարող են մասնակցել

Մրցույթին կարող են մասնակցել Երևան քաղաքում և ՀՀ մարզերում գործող բոլոր հանրակրթական դպրոցները:
Մրցույթի մասնակցությունն անվճար է:

Մրցույթի հաղթողները

Մրցույթի արդյունքում կընտրվեն 15 դպրոցներ, որոնք կհամալրվեն սպորտային մարզագույքով:
Յուրաքանչյուր դպրոցի մարզագույքի համար նախատեսված է **մեկ միլիոն (1 000 000) ՀՀ դրամ**:

Ինչպե՞ս դիմել

Նկարահանել տեսանյութ MP4 ֆորմատով (ցանկալի է սիրողական) և ուղարկել concours@af4sd.org էլ. հասցեին մինչև 2020թ.-ի մարտի 10-ը:
Տեսանյութը պետք է ներկայացված լինի դպրոցի կողմից:
Սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեսանյութերը չեն ընդունվի:
Յուրաքանչյուր դպրոցի համար կարող է ներկայացվել միայն մեկ տեսանյութ:

Մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ է՝

Պատրաստել կարճ տեսահոլովակ (10 րոպեն չգերազանցող), որը կպատմի դպրոցի, դպրոցական կյանքի, աշակերտների սպորտային նվաճումների, համայնքում և շրջակա միջավայրի պահպանման գործում աշակերտների ներգրավվածության և իհարկե դպրոցում սպորտի կարևորության մասին:

Պարտադիր պայմանները՝

- Տեսահոլովակը ցանկալի է լինի սիրողական և նկարահանված աշակերտների կողմից,
- Տեսահոլովակում աղջիկների և տղաների հավասար մասնակցությունը պարտադիր է,
- Դպրոցի անձնակազմը ևս կարող է մասնակցել տվյալ տեսահոլովակում աշակերտներին աջակցելու համար,
- Անհրաժեշտ է ցույց տալ դպրոցի սպորտային պայմանները (դահլիճ, գույք…),
- Հարկավոր է նշել սպորտի ոլորտում աշակերտների նվաճումները, եթե առկա են,
- Անհրաժեշտ է ներկայացնել սպորտի դերը աշակերտների կյանքում,
- Հստակ ներկայացնել սպորտային գույքի կարիքը դպրոցում,

Ամբողջ տեսահոլովակի ընթացքում պետք է զգալի լինի աշակերտների շահագրգռվածությունը իրենց դպրոցի համար սպորտային նոր մարզագույք ձեռքբերման հարցում:

Խրախուսվում են կրեատիվ աշխատանքները:

Առանձնակի ուշադրության կարժանանան այն տեսահոլովակները, որտեղ կմասնակցեն կրթական հատուկ կարիքներ, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող և փախստական (Սիրիա, Իրաք) աշակերտները:

Ընտրության կարգը

Կայուն Զարգացման Հայկական Հիմնադրամի կողմից կընտրվեն այն տեսանյութերը, որոնք կհամապատասխանեն ներկայացված պայմաններին:
Պայմաններին համապատասխանող տեսանյութերը կներկայացվեն մրցութային հանձնաժողովի քննարկմանը:
Հանձնաժողովը (կազմված Կայուն Զարգացման Հայկական Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի և ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչներից) կկազմի լավագույն տեսանյութերն ուղարկած դպրոցների համառոտ ցանկ, որից հետո Հիմնադրամի ներկայացուցիչները կիրականացնեն այցելություններ վերոնշյալ դպրոցներ՝ պայմաններին տեղում ծանոթանալու նպատակով:
Տեսանյութերի և այցելությունների հաշվետվությունների հիման վրա մրցութային հանձնաժողովը կհայտարարի հաղթող 15 դպրոցների անունները:

Ուշադրություն՝

Տեսանյութը պետք է ուղարկել դպրոցի կողմից էլեկտրոնային նամակով՝ որպես նամակի նպատակ նշելով **«Սպորտային սերունդ»-ՄՐՑՈՒՅԹ 2020**:

Նամակի մեջ անհրաժեշտ է նշել դպրոցի մասին հետևյալ տեղեկատվությունը՝

-Դպրոցի անվանումը և հասցեն,
-Տնօրենի անուն/ազգանունը,
-Մրցույթի պատասխանատուի կոնտակտային տվյալները,
-Աշակերտների թիվը (աղջիկներ/տղաներ),
-Կրթական հատուկ կարիքներով աշակերտների թիվը,
-Հաշմանդամություն ունեցող աշակերտների թիվը,
-Փախստական (Սիրիա, Իրաք) աշակերտների թիվը,
-Դպրոցի կամ սպորտային դահլիճի վերջին անգամ արված կամ նախատեսված վերանորոգման տարեթիվը,
-ԿԳՄՍ նախարարությունից կամ այլ կազմակերպություններից սպորտային գույք ստանալու տարեթիվը,
- Առկա սպորտային գույքի վերաբերյալ տեղեկությունը:

Մրցույթի շրջանակներում չեն իրականացվում վերանորոգման աշխատանքներ:

Կայուն Զարգացման Հայկական Հիմնադրամը «Սպորտային սերունդ» ծրագրի շրջանակներում համագործակցում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ:

Կայուն Զարգացման Հայկական Հիմնադրամ
ՀՀ, Երևան 0037, Ազատության պող. 10/7,
Հեռ.՝00 374 10 201840
էլ. հասցե՝ info@af4sd.org
www.af4sd.org
www.facebook.com/AF4SD